«Լուսաստղ» ՀԿ-ն դեկտեմբերի 5-ին կայացած տեղեկան ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ «Իմ ձայնի իրավունքը» ծրագրի շրջանակներում իրականացրեց հաշմանդամություն ունեցող անձանց միջոցով դիտորդական առաքելություն: Հաշմանդամություն ունեցող վերապատրաստված 40 դիտորդների կողմից իրականացվեց ընտրության գործընթացի դիտարկում և վերահսկում՝ նպատակ ունենալով պարզել հաշմանդամների մասնակցությունը, ընտրատեղամասերի մատչելիությունը հաշմանդամ քաղաքացիների համար, ընտրությունների թափանցիկությունն ու նաև ընդհանուր քաղաքացիների մասնակցությունը: Դիտարկումն իրականացվեց Լոռու մարզի Սպիտակ և Վանաձոր խոշորացված համայնքների 60 ընտրատեղամասերում՝ ներգրավելով 40 դիտորդ, որոնցից 2 խումբն իրականացրել է շրջիկ դիտորդական առաքելություն: Դիտորդների տեղաշարժման համար ներգրավվեցին ՀԿ-ի կամավորները, և տեղափոխումն իրականացվեց տաքսի ծառայության միջոցով: Դիտորդներին բաժանվեցին մանդատները, թղթապանակներ, որտեղ տեղադրված էին բոլոր այն նյութերը, որոնք անհրաժեշտ էր ունենալ առաքելության պահին, տրամադրվեցին էկո պայուսակներ և անվանաքարտեր, որոնց վրա արտացոլված էր կազմակերպության և ֆինանսավորող կառույցի լոգոն և ծրագրի անունը: Դիտորդական առաքելության նպատակներից էր նաև հասկանալ, թե որքանով են հաշմանդամություն ունեցող անձինք ներգրավված երկրում տեղի ունեցող կարևոր քաղաքական որոշումների կայացման գործընթացներում, ինչն անխտրական և ներառական միջավայրի ապահովման կարևոր չափանիշներից է:

## Հիմնական բացահայտումներ

Վերլուծելով դիտորդների ներկայացրած ամփոփ հարցաշարը, միջադեպի թերթիկները և թեժ գծի՝ ընտրության օրվան վերաբերող հարցերն ու առաջացած խնդիրները՝ կարող ենք փաստել հետևյալը.

- Հաշմանդամություն ունեցող մարդիկ իրենց քաղաքական իրավունքներն իրացնելիս հանդիպել են ամենատարբեր դժվարությունների, որոնք բնորոշ են հաշմանդամություն ունեցող մարդկանց տարբեր խմբերի, օրինակ՝ սայլակ օգտագործող կամ տեսողության և լսողական խնդիրներ ունեցող անձանց: Այսինքն՝ խնդիրներ կան, որոնք զուտ բնորոշ են միայն այդ անհատին, և անհատական լուծման կարիք կա:
- Ըստ այդմ՝ ընտրական գործընթացի տարբեր փուլերում հաշմանդամություն ունեցող մարդիկ տարբեր խոչընդոտների են հանդիպում: Օրինակ՝ նախընտրական փուլում, երբ քարոզչական աշխատանքներ են իրականացնում կուսակցությունները, անտարբերության են մատնում չլսող և չխոսող մարդկանց, հիմնականում նրանք չեն իրազեկվում տեղական մակարդակում իրականացվող

ընտրական գործընթացների մասին, անտեսվում են քարոզարշավների ժամանակ: Արդյունքում՝ ընտրողների այս խումբը դուրս է իրավունքի ինքնուրույն կիրառման հնարավորությունից, չեն կարողանում ընտրել այն ուժին, որին կարող են վստահել, իրենց ձայնը տալ, փոխարենն ապավինում են իրենց հարազատի, բարեկամի հորդորին, որ եթե ձայնդ տաս այսինչին, շատ լավ կլինի: Չտեսնող քաղաքացիները ևս ունեն այս խնդիրը, նրանք ևս դուրս են նախընտրական քարոզչության իրազեկման գործընթացից, հետևաբար իրենց ընտրությունը կատարում են որևէ մեկի հորդորով: Սա հիմնական պատճառներից մեկն է, որ կույրերն ու խուլերը շատ հաճախ նախընտրում են չգնալ ընտրությունների: Լսողության խնդիրներ ունեցող մարդիկ, որոնք չեն կարողանում մատչելի տեղեկատվություն ստանալ քարոզարշավի ընթացքում և ընտրություն կատարելիս դժվարությունների են հանդիպում՝ հաշվի առնելով, որ ծանոթ չեն կուսակցությունների ծրագրերին, չունեն նախընտրելի թեկնածուներ և այլն, նախընտրում են մեկուսանալ, մասնակցություն չունենալ այդ գործընթացին կամ առհասարակ կարևոր չեն համարում այդ գործընթացները:

- Թեժ գծի միջոցով բարձրաձայնված խնդիրներից շատերը վերաբերում են անգործունակ ճանաչված անձանց ընտրելու իրավունքի իրացմանը, սակայն, ըստ ՀՀ Սահմանադրության, անգործունակ ճանաչված անձը զրկված է իր քաղաքացիական իրավունքներից և չունի նաև ընտրելու և ընտրվելու իրավունք: Մինչդեռ նրանց խնամակալները պնդում են, որ իրենց խնամակալության ներքո գտնվող հաշմանդամություն ունեցող անձինք լիարժեք տիրապետում են ընտրական գործընթացներին, իրազեկված են թեկնածուների մասին և կարող են իրացնել ընտրելու իրենց իրավունքը:
- Այստեղ բախվել ենք իրարամերժ կարծիքների. մի կողմից՝ խնդիրը կրողները կարող են ճիշտ լինել, և օրենքը վերամշակման կարիք ունենա, մեկ այլ կողմից՝ հաշվի է առնվում այն, որ նրանք խոցելի են, ու ընտանիքի անդամները կամ այլ շահագրգիռ կողմեր կարող են նրանց ուղղորդել, խախտել նրանց քվեարկության գաղտնիության իրավունքը և ճնշումներով կամ այլ միջոցներով քվեներ կորզել: Նման դեպքեր նախկինում ունեցել ենք, երբ աշխատել ենք մտավոր խնդիրներ ունեցող անձանց հետ: Այս առումով Սահմանադրության մեջ ունենք խտրական հոդվածներ, որոնք բազմաթիվ միջազգային կառույցների ուշադրությունն են գրավել: Մասնավորապես, Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով ՄԱԿ-ի կոմիտեն Հայաստանի նախնական զեկույցը դիտարկեց և ներկայացրեց իր եզրափակիչ դիտարկումները, որտեղ նշում էր, որ կա Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելու և հաշմանդամություն ունեցող բոլոր մարդկանց ընտրելու իրավունքը վերականգնելու անհրաժեշտություն: ԵԽ-ն նույնպես նշեց, որ դա չի համապատասխանում ԵԽ Նախարարների կոմիտեի հրամաններին, խնդիր ներկայացվեց Վենետիկի հանձնաժողովի կողմից: Սակայն դեռևս

ունենք արձանագրված խնդիր, որին արձագանքում են միայն մի շարք հասարակական կազմակերպություններ:

Այսպես, 2021 թ. դեկտեմբերի 5-ին տեղի ունեցած ՏԻՄ ընտրություններին հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքի հիմնական խախտումներն արձանագրվել են «Լուսաստղ» ՀԿ-ի դիտորդների կողմից: «Իմ ձայնի իրավունքը» ծրագրի շրջանակում դիտորդների կողմից բացահայտված հիմնական խախտումներն ընտրատեղամասերի անմատչելիությանն են վերաբերել:

- Թեև պատասխանատուներն ընդգծում են որ թիվ 23 ընտրատարածքի թվով 93 տեղամասերի հիմնական մասը մատչելի են հաշմանդամություն ունեցող ընտրողի համար, այդուհանդերձ, մենք ևս փաստում ենք, որ դիտարկված ընտրատեղամասերի 1%-ը մուտքի թեքահարթակի կարիք չի ունեցել, կամ եղել են թեքահարթակներ, սակայն անվասայլակով տեղաշարժվող մարդիկ իրենց ընտրական իրավունքն իրացնելիս բախվել են դժվարության շենքերի ներսում, որոնց 10%-ում քվեարկության սենյակը տեղակայված է եղել երկրորդ հարկում կամ մինչև տեղամասի ներսը հասնելը եղել են աստիճաններ: Դիտորդները նաև նշել են սանիհանգույցի անմատչելիության խնդիրը:
- Ընտրության օրը թեժ գծի հեռախոսահամարին ստացվել է ընտրական գործընթացին վերաբերող 27 ահազանգ, որից 14-ը վերաբերել է տեղամասային կենտրոններ ինքնուրույն ներկայանալու հնարավորություն չունեցող (բժշկական կենտրոնում բուժվող, անկողնային հիվանդ, ինքնուրույն տեղաշարժվելու խնդիր ունեցող) մարդկանց ընտրական իրավունքի իրացմանը:

Նախևառաջ, խնդիրն այն է, որ ՀՀ ընտրական օրենսգրքում բացակայում են ընտրական իրավունքի իրական ապահովման համար գործուն կառուցակարգեր: Մասնավորապես, ՀՀ ընտրական օրենսգրքի 17-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները ֆիզիկական խնդիրներ ունեցող ընտրողների ընտրական իրավունքի իրականացման մատչելիությունն ապահովելու համար տեղամասային կենտրոններում ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ: Օրենսգրքի 65-րդ հոդվածը ընդհանրական անդրադարձ է կատարում քննարկվող հարցին՝ նշելով, որ քվեարկությանը մասնակցելու դժվարություններ ունեցող ընտրողների համար քվեարկությունը մատչելի դարձնելու նպատակով ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը պարտավոր է սահմանել լրացուցիչ հնարավորություններ՝ ապահովելով քվեարկողի կամքի ազատ արտահայտման հնարավորությունն ու քվեարկության գաղտնիությունը: Վերոնշյալ կարգավորումները բավարար հստակ չեն և չեն նախանշում այն քայլերը, որոնք պետք է և կարող են ձեռնարկել: Խնդիրը համակարգային է, քանի որ հաշմանդամություն ունեցող մարդկանց համար մատչելի ֆիզիկական միջավայրի ապահովումն էլ է պահանջում համակարգային լուծումներ: Այսպես, խնդրի լուծման կապակցությամբ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ՝ 2022 թ. Հունվարի 1-ից կկիրառվի որոշում, ըստ որի՝ սայլակով

տեղաշարժվող ընտրողները կարող են իրենց քաղաքացիական պարտքը կատարել ցանկացած ընտրատեղամասում, որն իրենց համար մատչելի կլինի:

- Ամեն դեպքում, Հայաստանը 2010 թ. վավերացրել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան, բայց մինչ օրս օրենսդրական դաշտը համապատասխանեցված չէ, միայն Ընտրական օրենսգիրքն ասում է, որ պետք է ապահովել ընտրությունների մատչելիությունը: ԿԸՀ-ի համապատասխան որոշումը մատչելիության նորմերի վերաբերյալ նախկինում շատ լավն էր, ամրագրված էր, օրինակ, որ ընտրատեղամասերի մատչելիությունը պարտադիր է, բոլոր տեղամասերը պետք է կահավորված լինեն խոշորացույցներով և բրայլյան կաղապարներով, սակայն նախորդ ԱԺ ընտրություններից առաջ ԿԸՀ-ն փոխեց իր որոշումը, և ձևակերպումները դարձան ոչ պարտադիր, այսինքն՝ հնարավորության դեպքում մատչելի դարձնել, տրամադրել խոշորացույցներ և այլն: Փաստացի՝ մենք չունենք նաև օրենսդրական հիմքերը, որոնք հաշմանդամություն ունեցող մարդկանց համար ընտրությունները մատչելի դարձնելու նախապայմանն են: Կան նաև շատ այլ խոչընդոտներ, որոնք հնարավոր չէ օրենսդրական մակարդակում լուծել, ինչպես վերաբերմունքն է հաշմանդամություն ունեցող մարդկանց նկատմամբ, նրանց որպես քաղաքական իրավունքներ կրող մարդկանց դիտարկելը:
- Դիտորդներն արձանագրել են նաև, որ ի տարբերություն 2021 թ. ԱԺ ընտրությունների, ՏԻՄ ընտրությունների ժամանակ ուղեկցողները շատ քիչ են եղել: Մինչդեռ ԱԺ ընտրություններին տարբեր ՀԿ ներկայացուցիչներ արձանագրում էին, որ օգնականի ինստիտուտը չարաշահվում է Հայաստանում: Ըստ դիտորդների՝ դա պայմանավորված էր նրանով, որ տեղամասերում առկա էին բրայլյան կաղապար, խոշորացույց:
- Վանաձոր խոշորացված համայնքում Բրայլյան կաղապարով ընտրությանը մասնակցել է 4 ընտրող, նախկին 8 տարիների ընթացքում այն չի գործածվել: Իսկ մինչ այդ ընտրությունների ժամանակ կիրառվել են «Լուսաստղ» ՀԿ-ի ջանքերի շնորհիվ 2003 թ. ներդրված՝ կույրերի հատուկ կաղապարները:
- Տարիների ընթացքում փոխվել են տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամները, իրազեկված չեն եղել հատուկ կաղապարների գործածության մասին, հետևաբար նաև չեն կիրառել: Սակայն մշտապես տպագրվել է այն, ինչը եղել է անարդյունավետ: Այժմ տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամները տեղեկացված են, նաև շահագրգիռ, սակայն դիտորդներն արձանագրել են կույրերի պասիվության խնդիր: Ընտրության եկած կույրերի հիմնական մասը հրաժարվել է օգտագործել հատուկ կաղապարները՝ օգտագործման մեխանիզմներին չտիրապետելու պատճառով: Բայց կաղապարն օգտագործած կույրերն էլ ընդգծում են, որ այն միջոց է, որի օգնությամբ դու քեզ լիարժեք մարդ ես զգում, գաղտնիությունը պահպանելով կատարում քո քաղաքացիական պարտքը:

## Եզրակացություն և առաջարկություններ

Որպես 1998 թ.-ից ՀՀ-ում հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրներով զբաղվող կառույց՝ փաստում ենք, որ ընտրական իրավունքի իրացումը շատ ավելի խորքային է, պետք է սկսել հաշմանդամների ընդհանուր խնդիրների լուծումներից, որի հետևանքը կդառնա նաև նրանց ներառումը սոցիալական տարբեր հարցերում, այդ թվում՝ ընտրություններում: Ասպիսով.

- Հաշմանդամություն ունեցողների ներառման ուղղությամբ ՀՀ-ն մի շարք պարտավորություններ ունի ինչպես ՀՀ սահմանադրությամբ և մի շարք օրենքներով, այնպես էլ միջազգային փաստաթղթերով վավերացված, ուստի պետք է անի հնարավոր ամեն բան՝ հաշմանդամություն ունեցողների համար մատչելիությունը և քվեարկելու նրանց իրավունքն ապահովելու համար: Հասկանալի է, որ խելամիտ շրջանակներ պետք է սահմանվեն՝ հաշվի առնելով, որ կարճ ժամանակամիջոցում հնարավոր չէ ամեն բան հարմարեցնել, և մատչելիությունն ինքնին լիարժեքորեն իրականանալի չէ, այսինքն՝ չկա մի միջավայր, որն ամբողջովին մատչելի է բոլորին: Այդ դեպքում առնվազն պետք է անել ամեն ինչ, որ ընտրությունները հնարավորինս մատչելի լինեն կարճ ժամանակամիջոցում, և չլինեն խմբեր, որոնք առհասարակ դուրս կմնան այս գործընթացից:
- Անհրաժեշտ է հատկապես ընդգծել, որ մատչելի ֆիզիկական միջավայրն անհրաժեշտ է ոչ միայն հաշմանդամություն ունեցող մարդկանց, այլ բոլորի համար, և այն ենթադրում է ոչ միայն շինությունների մատչելիություն, այլ նաև մայթեզրերի հարմարեցում և հետիոտների շարժը սահմանափակող այլ խոչընդոտների վերացում: Միջավայրը մատչելի պետք է լինի ոչ միայն տեղաշարժման, այլ նաև տեսողական, լսողական, և այլ խնդիրներ ունեցող մարդկանց համար:
- Հաշմանդամություն ունեցող մարդկանց ընտրական իրավունքի իրացումն ապահովելու նպատակով, բացի ընտրատեղամասերում ողջամիտ տարածքի ապահովումից, պետք է ձեռնարկվեն այլ միջոցներ ևս՝ ընտրական իրավունքի ֆիզիկական, տեղեկատվական և հաղորդակցությունների մատչելիությունն ապահովելու համար:
- Պետք է նաև աշխատանքներ տարվեն կուսակցությունների գրասենյակների մատչելիության, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող մարդկանց համար ընտրական հանձնաժողովներում ընդգրկվելու մեխանիզմների ապահովման ուղղությամբ:
- Պետք է քայլեր ձեռնարկել հաշմանդամություն ունեցող մարդկանց քաղաքական կյանքին մասնակից դարձնելու, այդ թվում՝ ընտրելու իրավունքի լիարժեք իրացման ուղղությամբ, ներառյալ տեղամասային կենտրոններ հասնելու, կենտրոններում ազատորեն տեղաշարժվելու և տեղեկատվություն ստանալու, ինչպես նաև այլ օրենսդրական կարգավորումների սահմանման միջոցով:

Ամփոփելով հիմնական աշխատանքները՝ պետք է նշենք, որ «Լուսատո» կազմակերպությունը հետևողականորեն կշարունակի իր աշխատանքները հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ուղղությամբ՝ օգտագործելով տարիների ընթացքում ձեռք բերված անձնական և գործնական կապերը՝ ուշադրության կենտրոնում պահելով նաև ընտրական գործընթացներում մեր շահառուների իրավունքների իրացման ապահովումը: Բացի դրանից, վերը արձանագրված խնդիրները շահերի պաշտպանության շրջանակներում կուղարկվեն Ազգային ժողովի պատգամավորներին, ԿԸՀ, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, կօգտագործենք հնարավոր հարթակները՝ հիմնախնդիրները լուծելու նպատակով:

Նշենք նաև, կազմակերպությունը դիմում է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ նախարարին կից հասարակական խորհրդում ներգրավվելու նպատակով, ինչը մեծապես կօգնի տեղական խնդիրներն ազգային մակարդակում քննարկելու և ևս մեկ քայլով լուծումները մոտեցնելու գործում:

# ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՕԲՅԵԿՏԻՎ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ. ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ

**Մայիս 2022**

Հետազոտությունն իրականացվել է «Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի կողմից «Արտահերթ ընտրություններ 2021 - տեղական դիտորդություն և քաղաքացիական հասարակության կողմից քաղաքացիների իրավազորում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է ՕքսԵՋեն հիմնադրամի, Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի, «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի և Քաղաքական դասընթացների երևանյան դպրոցի հետ համատեղ: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Հետազոտությունը իրականացվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում հեղինակը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

## Ներածություն

Ազատ ընտրությունների իրավունքը երաշխավորված է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով: Քաղաքացու ազատ կամարտահայտումը և ընտրության իրավունքի իրացումը քաղաքական իշխանության չարաշահման դեմ ժողովրդավարական հիմնարար արժեք են: Ցանկացած ժողովրդավար պետության հիմքը ազատ և թափանցիկ ընտրություններն են:

Ընտրական ողջ գործընթացի, ընտրական համակարգի բնականոն ընթացքի կարևորագույն նախապայմանը թափանցիկությունն ու հանրային վերահսկողությունն են: Վերջինը հնարավոր է միայն ազատ և անաչառ, անկողմնակալ մեդիա ծածկույթի դեպքում:

Ուստի արհեստավարժ, պատշաճ գիտելիքներով և հմտություններով օժտված լրագրողների առկայությունը չափազանց կարևոր է: Ընտրությունների լուսաբանումը պետք է պատշաճ իրականացվի՝ լրագրողների մասնագիտական, օրենսդրական և էթիկական նորմերին համաձայն:

Միայն ստուգված, հավաստի, կեղծ լուրերից զուրկ լրատվությունն է, որ նպաստում է գիտակցված ընտրությանը, ընտրողի տեղեկացվածությանը, տարբեր քաղաքական ուժերի կողմից մանիպուլյացիաների չենթարկվելուն:

Վերջին շրջանում ընտրական գործընթացներն ուղեկցվում են ատելության և թշնամանքի հռետորաբանությամբ[1], լրատվամիջոցներն ու սոցիալական կայքերը ողողվում են նմանօրինակ բովանդակությամբ՝ բացասաբար ազդելով թե՛ հանրային ընկալումների, թե՛ քաղաքական գործընթացների և թե՛ բուն ընտրության վրա: Ատելության և թշնամանքի հռետորաբանությունը գեներացվում է քաղաքական ուժերի ներսում, դառնում քաղաքական պայքարի գործուն մեխանիզմ՝ զանգվածային տրամադրություններն ուղղորդելու համար: Այս իրողությունը լուրջ մարտահրավեր է զանգվածային լրատվության միջոցների համար[2], միևնույն ժամանակ լրատվամիջոցի ընտրության հարց՝ դառնալ գործընթացի մասնակից և մուլտիպլիկացիայի էֆեկտով տարածել քաղաքական ուժերի բովանդակությո՞ւնը, թե՞ իրականացնել մոդերացիա՝ բազմապատկելով սեփական աշխատանքի ծավալը:

Ուստի, «Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպությունն այս հետազոտությամբ ձգտում է օժանդակել լրագրողական առաքելություն իրականացնող անհատներին՝ իրենց աշխատանքը կատարել մասնագիտական ամենաբարձր չափանիշներին համապատասխան՝ կիրառելով փորձառու գործընկերների արդեն իսկ կուտակած փորձը:

Սույն հետազոտության մեջ ներգրավվել են համապետական և տեղական ընտրական գործընթացների բոլոր փուլերի լուսաբանման տարիների փորձ ունեցող լրագրողներ, ուսումնասիրվել և ներկայացվում են լուսաբանման հիմնական խոչընդոտները, որոնց հիմնականում բախվում են լրագրողներն իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնելիս: Ուսումնասիրության տվյալների շտեմարան է հանդիսացել նաև «Հետաքննող

[1] https://ombuds.am/am/site/ViewNews/1737
[2] https://uic.am/8297

լրագրողներ» կազմակերպության երկարամյա գործունեության ընթացքում ընտրությունների լուսաբանման կուտակած փորձն ու գիտելիքը[3]:

Հետազոտության նպատակն է օգնել սկսնակ լրագրողներին բարձրացնելու իրենց աշխատանքի արդյունավետությունը, նպաստելու մեդիա տիրույթի առողջացմանը, առավել անկողմնակալ դարձնելու ընտրական գործընթացների լուսաբանումը:

Մեզ համար ելակետ է լրագրողներն խոշոր դերակատարումը ընտրողների ներգրավվածության, տեղեկացվածության, ազնիվ քաղաքական պայքարի, ընտրական ողջ գործընթացի ներառականության տեսանկյունից: Գոյություն ունեն նաև մի շարք կարևոր սկզբունքներ, որոնց, մեր կարծիքով, լրագրողները պետք է ընտրությունների լուսաբանման ընթացքում առանձնահատուկ ուշադրություն դարձնեն: Ի թիվս անկողմնակալության և անաչառության՝ այդ սկզբունքների շարքին է դասվում կանանց, երիտասարդների, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների և հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության լուսաբանումը:

Հուսով ենք, որ հետազոտությունը սկսնակ լրագրողների համար կհանդիսանա գործնականում կիրառելի ուղեցույց՝ օժանդակելով իրենց բարդ և շնորհակալ աշխատանքին:

## Մեթոդաբանություն

Հետազոտությունն իրականացվել է «Ընտրություններ բոլորի համար 2021 - տեղական դիտորդություն և քաղաքացիական հասարակության կողմից քաղաքացիների իրավազորում» ծրագրի շրջանակներում:

Հետազոտության ֆոկուս խմբում ներգրավվել են տարբեր լրատվամիջոցների 31 լրագրողներ, որոնք ունեն առնվազն 3 տարվա մասնագիտական և միևնույն ժամանակ ընտրական գործընթացների լուսաբանման փորձ Հայաստանի

Հանրապետության ողջ տարածքում և՛ համապետական, և՛ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում: Հետազոտության իրականացման ընթացքում տեղեկատվությունը հավաքվել է՝

- լրագրողների հետ հանդիպում/հարցազրույցների,
- քարոզարշավների լուսաբանման ուսումնասիրության միջոցով:

[3] https://bit.ly/3ET6bip
https://bit.ly/3MwyhTg

**Ընտրական գործընթացի լուսաբանում.**
**հիմնական մարտահրավեր և խոչընդոտներ**

*Հետազոտությանն ու հարցախույզին մասնակցած 31 լրագրողներից 83,3%-ն ունի համապետական և ՏԻՄ ընտրությունների, 10%-ը՝ միայն համապետական, 6,7 %-ը՝ միայն ՏԻՄ ընտրությունների լուսաբանման փորձ:*




Ընտրական ողջ գործընթացի թափանցիկության, լուսաբանման կարևորությունը և ընտրազանգվածին պատշաճ և համաժամանակյա տեղեկատվության տրամադրումը արդար և ժողովրդավար ընտրությունների գլխավոր նախապայմաններից են: Գործընթացի տարբեր փուլերի լուսաբանումը յուրովի կարևոր է որոշումների կայացման գործընթացի, թափանցիկության, հաշվետվողականության առումով:

*Հետազոտությանը մասնակցած լրագրողների 63.3%-ը առավել կարևորել է ընտրական գործընթացի բոլոր, 23.3 %-ը`նախընտրական, 13.3 %-ը` բուն ընտրության և միայն 0.1 %-ը` հետընտրական փուլերի լուսաբանումը:*




Ուսումնասիրության մասնակից լրագրողների մեծ մասը (63.3 %) ընտրական գործընթացը մեկ ամբողջություն դիտարկելով՝ գերադասում է այն լուսաբանել ամբողջությամբ՝ ընտրական ողջ շղթան հասկանալու և էական դրվագները ուշադրության կենտրոնում պահելու, հանրությանը հրամցնելու նպատակով:
Լուսաբանման կարևոր ու հիմնական շեշտադրումները, որոնց պետք է անդրադառնա լրագրողը հենց սկզբից, հետևյալն են՝

- թեկնածուի առաջադրման հիմնավորումը.
- նրա՝ տվյալ կարգավիճակի համապատասխանությունը.
- ընտրողների կարիքներին և տվյալ ժամանակի առաջնահերթություններին տեղեկացվածությունը.
- ընտրողին լսելու պատրաստակամությունը, գիտակցումը, որ ընտրողները կկարողանան ազդել իր կողմից որոշումների կայացմանը:

Արդյունավետ հանրային վերահսկողության տեսանկյունից բոլոր փուլերի փոխկապակցված լուսաբանումը, այն որպես երկարաժամկետ գործընթացի դիտարկումը ամրապնդում են ազատ, անկախ, ժողովրդավարական չափանիշներին համապատասխանող ընտրությունների կայացումը: Նախընտրական իրավիճակի, քարոզարշավների, նախնական խախտումների, բուն ընտրությունների ժամանակ առկա ընտրախախտումների, ուղղորդումների, քվեների հաշվարկի ընթացքի, հետընտրական զարգացումների պատշաճ ներկայացումը երկարաժամկետ ներդրում է երկրում քաղաքական իշխանության թափանցիկ ձևավորման գործում:

Ուսումնասիրության մասնակից լրագրողների 23.3%-ն առավել կարևորում է նախընտրական փուլի հրապարակայնացումը, քանի որ գործընթացի այս հատվածը համարում է հիմնաքարային և վճռորոշ քվեարկության արդյունքի տեսանկյունից: Դաշտում գործող լրագրողներն այս տեսակետը պայմանավորում են նաև լսարանի և նրա ընկալումների առանձնահատկություններով, մեդիագրագիտության աստիճանով:

Վերջին 4 տարիների ընթացքում քաղաքական դաշտում սեփական նպատակահարմարությունից ելնելով՝տեղեկատվական անազնիվ տեխնոլոգիաների զանգվածային կիրառման հետևանքով լրատվական ու սոցիալական հարթակները հեղեղվել են մանիպուլյատիվ ապատեղեկատվությամբ և ատելության խոսքով, ինչի վրա կառուցվում են քարոզարշավների հիմնական մեսիջներն ու բովանդակությունը: Մեթոդը կիրառվում է, հաջողությամբ աշխատում՝ հասարակության մեծ մասի մեդիագրագիտության ցածր մակարդակի, մեդիաների քաղաքականացման, հանրային ծայրահեղ ընկալումների պատճառով:

Այս փուլի օբյեկտիվ լուսաբանումն առավել քան կարևոր է, քանի որ պայմանավորում է ընտրությունների ընթացքն ու արդյունքը:

Հարցված լրագրողների 13.3%-ը բուն ընտրության լուսաբանումը համարում է լրագրողի գործունեության կարևոր գործառույթներից մեկը՝ իրավիճակի ներկայացման, ընտրախախտումների, զեղծարարությունների կանխարգելման, բացահայտման, արձանագրման, վերահսկման և ապօրինությունների հանրայնացման առումով: Բուն ընտրության ընթացքի լուսաբանումը համարում են առավել բարդ, քանի որ լրագրողական գործունեության ծավալման հիմնական խոչընդոտները հանդիպում են հենց այս փուլում:

Հարցված լրագրողների միայն 0.1 %-ն է առանձնացրել հետընտրական փուլը՝զարգացումները կարևորելով նախնական սպասելիքների և արդյունքի գնահատման տեսանկյունից:

**Ընտրական գործընթացի լուսաբանման հիմնական խնդիրները մեդիա անդրադարձներում**

Հետազոտության արդյունքում պարզվել է, որ լրագրողներն իրենք համարում են, որ Հայաստանում ընտրական գործընթացի լուսաբանումը բազմակարծություն չի ապահովում: Կողմնակալության տեսանկյունից հատկապես առանձնացվում և ընդգծվում են հետևյալ խնդիրները՝

- չճշտված, կեղծ լուրերի տարածումը, կողմնակալ լուսաբանումը՝ ելնելով ընդգծված քաղաքական ուղղվածությունից և կողմնակալ մոտեցումից.
- կողմնակալ լուսաբանում, քաղաքական որևէ գծի սպասարկում՝ պայմանավորված ընտրությունների շրջանում հնարավորինս ֆինանսական միջոցների ներգրավմամբ.
- ԶԼՄ-ների բևեռացվածությունը և քաղաքական օրակարգը, ինչը ենթադրում է հասարակական կարծիքի մանիպուլյացիա՝ զրկելով քաղաքացուն լիարժեք տեղեկացված և գիտակցված ընտրություն կատարելու հնարավորությունից.
- քաղաքական համակրանքներով պայմանավորված միակողմանի լուսաբանում, օրինակ՝ ատելության խոսքի քարոզի միակողմանի ներկայացմամբ.
- մեդիայի քաղաքական սեփականատերերի առկայություն, որն ի սկզբանե բացառում է չեզոքությունը, ստեղծում ի դեմս մրցակից ճամբարների ներկայացուցիչների մանիպուլյացիոն կամ խեղաթյուրված տեղեկատվության տարածման ռիսկ.
- լրագրողների կողմից անթաքույց քաղաքական կողմնորոշման, երբեմն այս կամ այն թիմի նկատմամբ ագրեսիայի դրսևորումներ:

Առհասարակ, մեր լրատվական դաշտում ընտրական գործընթացները կատալիզատորի դեր են ունենում՝ ակնհայտ դարձնելով որոշ լրատվամիջոցների պատկանելությունը որևէ քաղաքական ուժի կամ անձի:

Մասնագիտական ունակությունների տեսանկյունից հատկապես առանձնացվում են ներքոնշյալ խնդիրները՝

- հապշտապ, ոչ խորքային, ուղղակի լրահոս լցնելու նյութերի առկայությունը.
- ռեսուրսների սակավության պատճառով ոչ օպերատիվությունը, հիմնականում տարբեր լրատվամիջոցների կողմից որոշ իրադարձությունների, ընտրատեղամասերի կարևորումը, մյուսների անտեսումը.
- ընտրական գործընթացի ժամանակ լրագրողների իրավունքների և պարտականությունների, Ընտրական օրենսգրքի չիմացությունը.
- լռության և ընտրության օրը նախընտրական քարոզչության իրականացումը:

Այսպիսով՝հարցման մասնակիցների 80,6%-ն ընտրական գործընթացի լուսաբանումը հայկական մեդիայում համարում է կողմնակալ, 19,4%-ը՝չեզոք:




*Հետազոտության արդյունքում վերհանվել են ընտրությունների լուսաբանման արդյունավետությանն ու օբյեկտիվությանը խանգարող մի շարք խոչընդոտներ՝*

- լրատվամիջոցների կողմնորոշված քաղաքականացվածությունն ու կողմնակալությունը.
- քաղաքական ուժերի ներկայացուցիչների հաղորդակցության անպատրաստակամությունը, անհասանելիությունը.
- լրատվամիջոցների ոչ բավարար ռեսուրսները, ինչն իր անդրադարձն է ունենում համաչափ լուսաբանման վրա, որևէ լրատվամիջոց Հայաստանում չի կարողանում ապահովել ընդհանուր ծածկույթ.
- փոքր համայնքներում լրագրողների վրա ճնշումների առկայությունը, բոլորը բոլորին ճանաչում են, ու լրագրողները չեն կարողանում օբյեկտիվ լուսաբանում ապահովել.
- հանրության կողմից լրագրողների դերի ու նշանակության գիտակցման բացակայությունը, նրանց աշխատանքի նկատմամբ կանխակալ, բացասական վերաբերմունքը.
- լրագրության արժեզրկումը քաղաքական ուժերի և բարձրաստիճան պաշտոնյաների կողմից.
- լրագրողի կաշկանդվածությունը լրատվամիջոցի ներքին կանոնակարգով և քաղաքական օրակարգով.
- լրագրողների ցածր պրոֆեսիոնալիզմը, կողմնակալությունը, մակերեսային պատկերացումները նախընտրական ծրագրերի մասին.
- լրագրողներին արգելում են նկարահանել, փորձում են անջատել տեսախցիկը, պահանջում հեռանալ, կոպիտ ձևով են պատասխանում լրագրողների հարցերին.
- ընտրատեղամասային հանձնաժողովների անդամների, վստահված անձանց՝ լրագրողների իրավունքներին չտիրապետելը և լուսաբանման աշխատանքները խոչընդոտելը.
- հանրության հետաքրքրվածության բացակայությունը նախընտրական ծրագրերի նկատմամբ:

Հետազոտության մասնակից լրագրողներից 54,8%-ը որպես ընտրական քարոզչության օբյեկտիվ լրատվության խոչընդոտ է համարում մանիպուլյացիաները, 35,5%-ը՝ ատելության խոսքը և 9,7%-ը՝ ապատեղեկատվությունը:




Նույն ֆոկուս խմբի կարծիքով՝ քարոզչության ընթացքում քաղաքական ուժերի կողմից տարածվող մանիպուլյացիաները, ատելության խոսքը և ապատեղեկատվությունը մուլտիպլիկացիայի էֆեկտով տարածվել են ԶԼՄ-ներով:

Տարածման պատճառները երեքն են՝

- դիտավորություն, քաղաքական շահերի սպասարկում.

Հաշվի առնելով հայաստանյան մեդիայի քաղաքականացվածությունը, հիմնականում տարբեր քաղաքական շահերին սպասարկելը, քաղաքական խիստ լարված իրավիճակը և գերիշխող դեղին մամուլի դերը՝ զանգվածաբար տարածում են գտնում թե՛ ապատեղեկատվությունը, թե՛ մանիպուլյացիաները, թե՛ ատելության խոսքը:

- փաստերի ստուգման ունակությունների պակաս, լրատվամիջոցներում փաստերի ստուգման թիմի բացակայություն.

Հատկապես նախընտրական փուլում իրադարձությունները զարգանում են արագ, և առաջանում է լուրը լսարանին հնարավորինս արագ հասցնելու խնդիր: Լրատվամիջոցների ռեսուրսների սակավության պատճառով լրատվամիջոցների հիմնական մասը չունի փաստերի ստուգման թիմեր, լրագրողների գերծանրաբեռնվածությունը, փաստերի ստուգման գործիքներին չտիրապետելը հանգեցնում են հնչեցված մտքերի փոխանցումը լսարանին առանց ճշմարտացիության ստուգման և առանց ֆիլտրման: Հաճախ լրատվամիջոցները մանիպուլյացիոն և ատելության խոսքի հռետորաբանությունը նույնությամբ վերարտադրելով՝ իրենց նկատմամբ քննադատությանն ի պատասխան հակադարձում են, որ դրանք քաղաքական գործիչների խոսքից մեջբերումներ են՝ հանելով իրենց վրայից պատասխանատվությունը:

- լրատվամիջոցի ընտրություն՝ դիտումներ և լսարանի ներգրավվածություն ապահովելու նպատակով.

Որոշ ԶԼՄ-ներ հենց ապատեղեկատվություն, մանիպուլյացիա և ատելության խոսք տարածելու ուղղությամբ են աշխատում, քանի որ նման բովանդակությունը, որպես կանոն, մեծ տարածում ու պահանջարկ ունի լսարանում:

Ընտրություններ լուսաբանելիս, *մանիպուլյացիաների և ատելության խոսքի* հանդիպելիս ֆոկուս խմբի մասնակից լրագրողները փորձել են հնարավորինս պահպանել լրագրողական էթիկան, հնարավորության դեպքում ֆիլտրել, չհանրայնացնել: Ոմանք սկզբունքորեն, անկախ քաղաքական ուժին ուղղված հացցեականությունից, իրենց նյութերից հանել են այդ հատվածը:
Լրագրողները նշել են նաև, որ ամբողջությամբ ֆիլտրումն ու ձեռնպահ մնալն անհնար են, քանի որ նախընտրական քարոզչության ժամանակ տարածվում են թեկնածուների հայտարարություններ, որոնք պարունակում են ատելության խոսք, արվում են հարցազրույցներ և ուղիղ եթերներ:

*Ապատեղեկատվությունից* զերծ մնալու համար լրագրողները ֆիլտրել են ինֆորմացիան, նախընտրել հավաստի, բաց աղբյուրները, հնարավորության դեպքում ստուգել փաստերը: Նաև մանիպուլյացիաներին չտրվելու նպատակով լուրը ստուգել են մի քանի աղբյուրից՝ ճանաչելով քաղաքական դաշտը:
Լրագրողները հաճախ դիմում են արխիվների օգնությանը, տվյալ ուժի կամ գործչի նախորդ ասածների հիշեցման, այլ աղբյուրից տեղեկատվության համադրման համար:

Ֆոկուս խմբի լրագրողները հատուկ ընդգծում են նախապես պատրաստված լինելը, բոլոր կողմերին ձայնի հնարավորություն տալը, փաստերը ձայնագրելը, տեսանկարահանելը, տարբեր մեթոդներով փաստեր ստուգելը՝ տեղում այցելելով, ինտերնետային որոնմամբ, պաշտոնական, ոչ պաշտոնական աղբյուրների համադրմամբ:

***Հետազոտության արդյունքում երիտասարդ, սկսնակ լրագրողների համար մշակվել են գործնական խորհուրդներ ընտրական գործընթացի անաչառ, անկողմնակալ ու հավաստի լուսաբանմանը նպաստելու համար:***

- Լինել ազնիվ սեփական խղճի առաջ, զարգացնել մասնագիտական որակները, հիշել՝ լրագրողը փաստերն արձանագրողն է, այլ ոչ թե դրանք գնահատողը:
- Լինել անկողմնակալ, անաչառ, ձայնի հնարավորություն տալ բոլոր կողմերին:
- Ստուգել ստացած տեղեկատվությունը և ցուցաբերել քաղաքական չեզոքություն:
- Լրագրողական գործունեություն ծավալելիս լինել պատասխանատու, օպերատիվ, համարձակ, արագ կողմնորոշվել տարբեր իրավիճակներում, հետևել սեփական խոսքին ու վարքագծին:

- Լինել ազնիվ, վստահ և երբեք թույլ չտալ ձեզ ուղղորդել: Մարդկանց հետ լինել բարեկիրթ, այնպես անել, որ ձեր օրինակով մարդկանց մեջ ձևավորվի լրագրողի դրական կերպար:
- Իմանալ լրագրողի իրավունքները, որպեսզի ձեզ չմանիպուլացնեն: Ինքներդ նույնպես չմանիպուլացնեք, եթե օրվա ընթացքում արդեն հինգերորդ ընտրատեղամասում եք, և դեռ հետաքրքիր ոչինչ չի կատարվել, ապա չփորձել հրահրել կամ հնարել սենսացիա:
- Չտրվել հույզերին, միշտ լինել հավասարակշռված:
- Իմանալ Ընտրական օրենսգրքի պահանջները, նախապես իմանալ լրագրողների ու ընտրությունների մասնակիցների իրավունքները, պաշտպանել սեփական իրավունքները՝ չխախտելով մյուսներինը:
- Մանրամասն ուսումնասիրել ընտրություններին մասնակից ուժերի նախընտրական ծրագրերը, թեկնածուների կենսագրությունը, գործունեությունը, տվյալ բնակավայրի ժողովրդագրական պատկերը, տվյալ ընտրատեղամասում նախորդ ընտրությունների արդյունքները: Իմանալ ընտրական հանձնաժողովի անդամների, դիտորդների, վստահված անձանց և լրագրողների պարտականությունները, թույլատրելի և անթույլատրելի հնարավոր գործողությունները:
- Ուսումնասիրել արխիվային նյութեր՝ հասկանալու համար քաղաքական ուժի, գործչի հետագիծը, զինվել տեղեկատվությամբ՝ մանիպուլյացիան և ապատեղեկատվությունը կանխելու նպատակով:
- Ուշադրություն դարձնել ընտրության ամբողջ գործընթացին, չխառնվել վիճաբանությանը, կատարել լրագրողի աշխատանքը՝ հետևել և լուսաբանել:
- Հնարավորինս զուսպ լինել ընտրությունները լուսաբանելիս՝ չվերածվելով ակտիվիստների:
- Չդառնալ որևէ ուժի կամ գործչի պարզ խոսափող, որքան էլ այն ձեր համակրանքը վայելի: Նաև՝ հակառակը:
- Երբեք չդադարել սովորել, զարգացնել որոնման, հետազոտման, փաստերի համադրման, ստուգման մասնագիտական ունակությունները:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

# ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ.

# ԻՆՉՊԵՍ ՆՎԱԶԵՑՆԵԼ ԹՂԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԿԱՄ ԱՊԱՀՈՎԵԼ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

## ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

#Elections4All
Ընտրություններ բոլորի համար

Երևան, 2022

Սույն համառոտագիրը պատրաստվել է «Այ Էս Էս Դի» Համայնքների կայուն զարգացման նորարարական լուծումներ» ՀԿ-ի կողմից «Ընտրություններ բոլորի համար 2021 - տեղական դիտորդություն և քաղաքացիական հասարակության կողմից քաղաքացիների իրավազորում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է ՕքսԵՋեն հիմնադրամի, Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի, «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի և Քաղաքական դասընթացների երևանյան դպրոցի հետ համատեղ: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական Միության կողմից:

Այս փաստաթուղթը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում հեղինակը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

## Ամփոփագիր[1]

Սույն աշխատությունը ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) կոշտ թափոնների կառավարման (ԿԹԿ) ներկա վիճակը՝ կենտրոնանալով ընտրությունների համար օգտագործվող թղթի վրա: «Այ Էս Էս Դի» ՀԿ-ի կողմից իրականացվել է 2021 թվականի ՀՀ խորհրդարանական ընտրությունների կյանքի ցիկլի գնահատում (ԿՑԳ), ինչի արդյունքում էլ վերլուծվել է ԿԹԿ քաղաքականության շրջանակը: ԿՑԳ արդյունքները ցույց են տալիս, որ 2021թ. ՀՀ խորհրդարանական ընտրություններում ընտրությունների թափոնների պատշաճ կառավարումը լավատեսական սցենարով կնվազեցներ ջերմոցային գազերի (ՋԳ) արտանետումները 346 տոննայով:

ՀՀ ընտրական նոր օրենսգիրքը (ՀՀ ընտրական օրենսգիրք, 2016թ.) սահմանում է ընտրությունների անցկացման նոր պայմաններ և ընթացակարգեր՝ աճող հետաքրքրություն առաջացնելով ընտրությունների թափոնների ԿԹԿ-ի նկատմամբ ընդհանրապես և քվեաթերթիկների ու ծրարների նկատմամբ մասնավորապես: Բնապահպանական լավագույն փորձի և կայուն ԿԹԿ ռազմավարությունների և քաղաքականությունների ընդունումն ավելի ու ավելի կարևոր է դառնում, ինչի պատշաճ կիրառումն ապահովում է հանրային առողջության և շրջակա միջավայրի պաշտպանությունը և առաջարկում սոցիալական ու տնտեսական օգուտներ:

[1] Սույն ամփոփագիրը հանդիսանում է առաջարկ՝ միտված նշված ոլորտն ավելի խորքային ուսումնասիրելու և օրենսդրական փոփոխությունների փաթեթ առաջարկելու

**Թղթի սպառում Խորհրդարանական ընտրություններին (2021 թ.) Նախապատմություն**

Ընտրությունների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությունը (օդի, ջրի և հողի աղտոտում, թափոնների արտադրություն, վնաս էկոհամակարգին և այլն) տատանվում է՝ կախված մի քանի գործոններից, ինչպիսիք են՝ ընտրական համակարգի տեսակը, դրա գործընթացները, քվեարկության մեթոդները, օգտագործվող ռեսուրսների մատակարարման շղթան, ինչպես նաև ընտրական գործընթացի առանձին բաղադրիչների հետ կապված իրավական կարգավորումները: Հետևաբար, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակով իրականացվել է 2021 թվականի ՀՀ խորհրդարանական ընտրություններում օգտագործված քվեաթերթիկների և ծրարների ԿՑԳ-ի մանրամասն ուսումնասիրություն ու վերլուծություն:

Համաձայն ՀՀ Ընտրական օրենսգրքի, (2016թ.)՝ 2021 թվականի խորհրդարանական ընտրությունների ժամանակ ընտրատեղամասում յուրաքանչյուր ընտրողին տրամադրվել է յուրաքանչյուր կուսակցության/դաշինքի համար եզակի քվեաթերթիկ և մեկ ծրար: Քանի որ ընտրություններին մասնակցում էր 25 քաղաքական ուժ/դաշինք, յուրաքանչյուր ընտրող տրամադրված 25 քվեաթերթիկից ընտրում էր մեկ քվեաթերթիկ, դնում այն ծրարի մեջ և գցում քվեատուփը՝ թողնելով 24 քվեաթերթիկ, որոնք ենթակա էին դեն նետելու: Այսպիսով, 2021 թվականի ՀՀ խորհրդարանական ընտրություններին 2,595,512 ընտրողների համար տպագրվել/արտադրվել է 67 միլիոն քվեաթերթիկ և 2,68 միլիոն ծրար (ԿԸՀ, 2022 թ.)՝ հաստատված նմուշների համաձայն: Օգտագործվել է 130 տոննա թուղթ:

2021 թվականի ՀՀ խորհրդարանական ընտրությունների համար, ընդհանուր առմամբ, բոլոր տեղամասերին բաժանվել է 98,5 տոննա քվեաթերթիկ և 15,4 տոննա ծրար: Քանի որ ընտրություններին մասնակցած ընտրողների թիվը 1,281,997 էր (բոլոր ընտրողների մոտ 49,4%-ը): Տրամադրված 25 քվեաթերթիկներից ընտրում էին միայն մեկ քվեաթերթիկ, ընդհանուր առմամբ՝ 1,281,997 քվեաթերթիկ (1,88 տոննա) և 1,2971 քվեաթերթիկ (7,54 տոննա) գցվել է քվեատուփերը: Բոլոր ներկայացված քվեները (քվեաթերթիկները) հետագայում հաշվարկվել և արխիվացվել են:

Ընդհանուր առմամբ, մոտ 96,62 տոննա քվեաթերթիկ և 15,4 տոննա ծրար (ընդհանուր 112 տոննա) դեն են նետվել ընտրությունների ընթացքում կամ դրանից անմիջապես հետո: Ինչ վերաբերում է արխիվացված քվեաթերթիկներին, ապա Կառավարության 397-Ն որոշման համաձայն (2019 թ.) ընտրություններից հետո 1,88 տոննա արխիվացված քվեաթերթիկները 5 տարի կպահվեն Հայաստանի ազգային արխիվում, ապա կոչնչացվեն: Կառավարության 884-Ն որոշման համաձայն՝ հնգամյա ժամկետի ավարտից հետո քվեաթերթիկները ոչնչացվելու են կա՛մ այրման, կա՛մ վերամշակման միջոցով (Կառավարության 884-Ն որոշում, 2017թ.[2}):







Նկար 1: Օգտագործված քվեաթերթիկների և ծրարների քանակ

Սակայն նշված մեթոդներից և ոչ մեկը նշված հրամանագրերում առաջնահերթություն չունի: Իսկ չօգտագործված քվեաթերթիկները և ծրարները հեռացնելու մեխանիզմները դեռևս օրենսդրորեն հստակ կարգավորված չեն: Սակայն 2021 թվականի ՀՀ խորհրդարանական ընտրությունների համար օգտագործված քվեաթերթիկները և ծրարները վերամշակելի են, իսկ Հայաստանում գործող բազմաթիվ վերամշակող ընկերություններ պատրաստ են գնել օգտագործված թուղթն ու վերամշակել այն՝ այսպիսով նվազեցնելով ջերմոցային գազերի արտանետումները և բնական ռեսուրսների կիրառումը:

[2] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=115055

**Քվեաթերթիկների և ծրարների հեռացման սցենարներ**
**Քվեաթերթիկներն ու ծրարները հեռացվել են անմիջապես ընտրություններից հետո**

| | Լավատեսական | իրատեսական | հոռետեսական |
|---|---|---|---|
| **Վերամշակում** | 90% | 15% | 5% |
| **Աղբավայր** | 5% | 60% | 70% |
| **Այրում** | 5% | 25% | 25% |
| **Քվեաթերթիկներն ՈՒ ծրարները հեռացվել են հնգամյա արխիվացումից հետո** | | | |
| | Լավատեսական | իրատեսական | հոռետեսական |
| **Վերամշակում** | 95% | 50% | 5% |
| **Աղբավայր*** | 0% | 0% | 0% |
| **Այրում** | 5% | 50% | 95% |

* Աղբավայրը չի համարվում արխիվացված քվեաթերթիկների և ծրարների հեռացման մեթոդ, քանի որ Կառավարության 2017 թվականի 884-Ն որոշմամբ ասվում է, որ արխիվացված քվեաթերթիկները և ծրարները պետք է ոչնչացվեն կա՛մ այրելով, կա՛մ վերամշակելով:

Հետևաբար, արխիվացված քվեաթերթիկների համար կարող են դիտարկվել հեռացման երկու տարբերակները՝ վերամշակումը և այրումը:
Ցելյուլոզը և թուղթը օդի, ջրի ու հողի արդյունաբերական ամենաշատ աղտոտողներից են: Արտադրության ընթացքում օգտագործվում են քլորի վրա հիմնված սպիտակեցնող նյութեր, որոնք հանգեցնում են թունավոր նյութերի արտանետմանը ջրի, օդի և հողի մեջ: Երբ թուղթը փտում է, այն արտանետում է մեթան գազ, որը 25 անգամ ավելի թունավոր է, քան $CO_2$-ը:
Մեկ տոննա թղթի արտադրության համար հատվում է մոտավորապես 24 ծառ, մինչդեռ թղթի թափոնների վերամշակման դեպքում հնարավոր է դառնում խնայել միջինում 17 ծառ՝ մեկ տոննա թղթի դիմաց: Թղթի արտադրության համար օգտագործվում են ջրի և էներգիայի մեծ պաշարներ, արտադրության արդյունքում առաջանում են լրացուցիչ թափոններ, որոնք էլ իրենց հերթին վնասում են բնությանը և ի լրում այլ գործողությունների հետ՝ հանգեցնում գլոբալ տաքացման:

## Առաջարկներ

ա/ ՀՀ Ընտրական օրենսգրքով սահմանել ընտրությունների ընթացքում կիրառվող բնական ռեսուրսների օգտագործումը և դրանց հետագա կառավարումը
բ/ Յուրաքանչյուր ընտրությունից հետո չօգտագործված և անվավեր ճանաչված, ինչպես նաև հնգամյա արխիվացումից հետո քվեաթերթիկներն ու ծրարները, ինչպես նաև նախընտրական արշավների ժամանակ օգտագործած թղթե նյութերը (պաստարներ, գովազդային թերթոններ և այլ) հանձնել վերամշակման այլ միջոցներով դրանք ոչնչացնելու փոխարեն
գ/ Ընտրությունների ժամանակ կիրառել միայն վերամշակված կամ այլընտրանքային թուղթ
դ/ Տնկել հատուկ հավաստագրված ծառերի այգի՝ նախատեսված թղթի արտադրության համար
ե/ Քվեաթերթիկների և ծրարների կիրառումը հասցնել նվազագույնի՝ կիրառելով առավել կայուն լուծումներ. օրինակ՝ 25 առանձին քվեաթերթիկի տպագրության փոխարեն տպագրել մեկ ընդհանուր քվեաթերթիկ
զ/ Անցնել ամբողջական կամ մասնակի էլեկտրոնային քվեարկության մեխանիզմի

